Ռուսաց Միաւոր Թագաւորութեանց զօրաց գլուխ ։ 2 . Կչռատուհի Մարիամ-Եղիսաբէթ-Քարոլին-Վիկտորիա ծն . 18 . Յունիս 1815 . ամուսնացած 22 Հոկտ 1836 Կարոլոս-Գուլ-Լուի Հեսսի մեծ դքսին իշխանին հետ 3 . Իշխանուհի Փրեդերիկա-Ֆը-րանսուա-Աւգոստա-Մարիամ-Հէտվիգ . ծն . 15 Հոկտ . 1825 . ամուսնացած Մաքսիմիլիանոս Բ Պաւիերայի Թագաւորին հետ ։

Գուլիելմոս Գ Ֆրեդերիքոս Ճորճ Լուդովիկոս . Ա. գոստոս իշխանուհի Լիեկնիցի . կոմսուհի Հոհէնցոլ-լէռնի . ծն . 30 Օգոստ . 1800 . դուստր Փերդի-նանդոս Հարրաքի կոմսին . ամուսնացած Փրեդե-րիկոս-Գուլ-Գ Թագաւորին հետ 9 Նոյ . 1824 . այրի մնացած 7 Յունիս 1840 ։

## Հոհենցոլլեռն-Հեքինկենի իշխանութիւնը ։

(Կրօնքին . Ուղղափառ կաթողիկէ հաւատքով)

Իշխան Փրեդերիկոս-Գուլ-Կոստանդին ծն . 16 Փետր 1801 յաջորդեց իր հօրը Փրեդերիկոս-Հեր-ման-Օթոն իշխանին (ծն . 22 Յուլ . 1776) 13 Սեպտ . 1838 ։ 7 Դեկտ . 1849ին դաշնագրութեամբ հրաժարեցաւ իր իշխանութեան կառավարութե-նէն և յանձնեց Բրուսիոյ Թագաւորին . Թագաւո-րական իշխանազունի մը ամէն իրաւունքները՝ստա-նալով ։ Թագաւորական մասնաւոր հրովարտակով մը 27 մարտ 1850 Բարձրութիւն (Altesse) պա-տուանուն առաւ , Թագաւորական տան կրտսեր եղբօր իրաւունքներով . մեծ ասպարապետ Բրու-սիական բանակին մէջ . գլուխ զօրաց ՚ի գնդին . ամուսնացած 22 Մայ . 1826 Եւգինիա Լէթեն-պէրկի իշխանին դստեր հետ . ծն . 23 Դեկտ . 1808 . այրիացեալ 1 Սեպտ 1847 . երկրորդ ան-գամ ամուսնացած առորակարգ[1] ամուսնութեամբ 13 Նոյ . 1850 Ամալիա-Սոփիա-Քարոլինա-Աստ-լայտէ Րոթէնպուրկի կոմսուհւոյն հետ , դուստր Կարոլոս-Փրեդերիկոս-Էրնէստ Ըէնքի կայարոնին ծն . 13 Յուլ . 1832 ։

## Հոհենցոլլեռն-Սիկմարինկենի իշխանութիւնը ։

Իշխան Կարոլոս-Անտոն-Յովակիմ-Զեֆիրէն-Փրեդերիկոս-Մէնրատ ծն . 7 Սեպտ . 1811 . Յա-ջորդեց իր հօրը Կարոլոս իշխանին 27 Օգոստ . 1848 . հրաժարեցաւ ինքն ալ իր իշխանութենէն յանձնելով Բրուսիոյ Թագաւորին 7 Դեկտեմբերի 1849ին . նոյն Հեքինկենի իշխանին դաշինքներով ու պատուանուններովը որ ընդունեցաւ 20 մար-տի 1850 . ամուսնացած 21 Հոկտ . 1834 ։

Յովսեփին-Փրեդերիկա-Լուիզա Իշխանուհւոյն հետ . ծն . 21 Հոկտ . 1813 . դուստր Պատի մե-ռած Կարոլոս-Լուի-Փրեդերիկոս մեծ դքսին ։

Որդիքն . Ա Լէոբոլտ-Ստեփանոս-Կարոլոս-Անտոն ժառանգական իշխան . ծն . 22 Սեպտեմ-բերի 1835 . Բրուսիոյ զինուորական ծառայու-թեան մէջ ։

Բ . Ստեփանի-Փրեդերիկա-Անտոնիէդ . ծն . 15 Յուլ . 1837 ։

Գ . Կարոլոս-Էյդիլ-Զեֆիրէն-Լուի . ծն . 20 Ապր . 1839 ։

Դ . Անտոն-Էկոն- Կարոլ-Փրեդ . ծն . 7 Հոկտ . 1843 ։

Ե . Փրեդերիկոս-Եւգինէոս-Յովհ . ծնած 25 Յունիս 1841 .

Զ . Մարիամ-Լուիզա-Քարոլինա . ծն . 17 . Նոյ . 1845 ։

Դեռ ողջ են աս իշխանիս հայրն ու խորթ մայրը որ Հոհէնլոհէ Վալտէնպուրկի իշխանին դուստրն է . իսկ բուն իր մայրը Միւրատ երբեմն Նափո-լիի Թագաւորին դուստրն է ։ Երկու քոյր ալ ունի որոնցմէ պզտիկը կարգուեցաւ Յովակիմ-Նափո-լէոն Միւրատայ կրտսեր որդւոյն Փէփոլիի մար-գէզին հետ . 5 Դեկտ . 1844 ։

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ

Բիւրաբեղուն պտղալից ծառ
 Ոստերներէն կը քարկոծուի
 Իւրեններէն կը պահպանուի .
Տերևալից անպտուղ ծառ
 Տակը դատարկ մարդիկներէ
 Ըստ մը պատիւ փառք կը գտնէ ։

Բարեկամիդ մի ծախեր
 Եւ հարուստէն մի գներ
 Վաճառքդ կ՚ըլլայ բարեբեր ։

Ով կը չինէ տուն տեղ կ՚ըլլայ
 Ինքը հանգիստ կը գտնայ ,
Բայց իր քրտնակը վատուժցած
 Մահուան չունչ կառնէ կուտայ ։

[1] Գղ . Mariage morganatique, որ է Թագաւո-րազնի մը՝ Թագաւորական ցեղէ չըլլողի մը հետ պսակուիլը , որ Ձախաձեռնեան ամուսնութիւն ալ կ՚ըսուի ։ Գղ . Mariage à main gauche.

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ Ս . ՂԱԶԱՐՈՒ